Արտաքին աուդիտի ընտրության
հրապարակային մրցույթի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է աուդիտորական ծառայություն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ:

Մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն).
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48:

Մրցույթով կնքվելիք պայմանագրի առարկան.
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ 2014թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացում, որը ներառում է.

- ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը,
- ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, Բանկի ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը,
- ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգումը,
- աուդիտորական եզրակացության և աուդիտորական հաշվետվության (նամակ Բանկի ղեկավարությանը) կազմումը:

Աուդիտի ընդգրկման բնագավառներն են՝ Բանկի հաշվապահական հաշվեկշիռը, հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, Բանկի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունները:

Մրցույթի հայտերի ընդունման ժամանակահատվածը՝

09.09.2014թ-ից մինչև 19.09.2014թ. յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 1000-ից մինչև 1700:

Մրցույթի հաղթողին որոշելու կարգը.

Մրցույթի հաղթող է ճանաչվում լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը, որը հաստատվում է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Ընդհանուր ժողովի կողմից:

Մրցույթի հայտերը բացելու և ամփոփելու կարգը.

Մրցույթի հայտերը կբացվեն և արդյունքները կամփոփվեն 01.10.2014թ.: Բանկի խորհուրդը պետք է գնահատի, ամփոփի աուդիտորական կազմակերպությունների առաջարկությունները և դրանք ներկայացնի Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովի հաստատմանը:

Մրցույթի հայտերի ներկայացման կարգը .

Մրցույթի հայտը ներկայացվում է փակ ծրարով՝ ծրարի վրա նշելով.

- մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն),
- մրցույթի անվանումը,
- հայտատուի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը կամ կապի այլ միջոցները:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը.

Մրցույթի հայտը պետք է պարունակի հետևյալ նվազագույն տեղեկատվությունը՝

- հայտի ծրարում առկա փաստաթղթերի ցանկը և էջերի քանակը,
- մրցույթի մասնակցի տվյալները, այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսահամարը.
- Հայաստանի Հանրապետության տվյալ կազմակերպության կողմից աուդիտի անցկացման առնվազն 5 տարվա փորձի մասին տեղեկություններ, սակայն նշված չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող սուդիտորական կազմակերպությունների վրա,

- Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) և անցումային տնտեսությամբ երկրներում բանկերի աուդիտի անցկացման փորձի մասին տեղեկություններ,

- աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր(ներ)ի որակավորման մակարդակի և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ. աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և/կամ աուդիտորական որոկավորման փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական),

- աուդիտորական խմբում ներգրավվելիք աշխատակիցների որակավորման մակարդակի և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ: Աուդիտորական խումբ ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենան աուդիտորական կազմակերպության երեք տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և/կամ աուդիտորական որակավորման փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հաստատող փաստաթուղթ կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

- աուդիտորական ստուգման իրականացման մեթոդները, աուդիտի անցկացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները, աուդիտի ընդգրկման բնագավառները,

- աուդիտի ծառայության գինը՝ ներառյալ հարկերը և այլ ծախսերը, վճարման կարգն ու պայմանները:

Մրցույթի մասնակցության համար նախավճարի չափ սահմանված չէ:

Մրցույթում որևէ ծածկագիր առկա չէ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ՝ ք. Երևան, Նալբանդյան փողոց, 48, 101 սենյակ, կամ զանգահարել +374 10 59-20-04 հեռախոսահամարով՝ Վարչության նախագահի տեղակալ - Ֆինանսական դեպարտամենտի տնօրեն Մ. Սահակյանին (էլ. փոստի հասցե՝ manvel.sahakyan@armbusinessbank.am):

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Արտաքին աուդիտի ընտրության կարգին ծանոթանալու և դրա պատճենը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի նախագահի օգնականին՝ զանգահարելով հետևյալ հեռախոսահամարով՝ +374 10 59 20 01:

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Խորհրդի նախագահ՝
Վ. Գրիգորյանց